ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 363-Ա

«04» 08 2023 թ. ք. Երևան

Ռ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԴԱՏԱԽԱԶԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԻՆ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ, ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԴԱՏԱԽԱԶԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ Ռ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի N 254-Ա ՀՐԱՄԱՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Դատախազության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, 60-րդ հոդվածի 1-ին մասով և «Նորմատիվ-իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Արարատի մարզի դատախազ Ռաֆայել Ռազմիկի Մանուկյանին փոխադրել Երևան քաղաքի դատախազի տեղակալի պաշտոնին:
2. Սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից Երևան քաղաքի դատախազի պարտականությունների կատարումը դնել Ռաֆայել Ռազմիկի Մանուկյանի վրա:
3. Սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել ՀՀ գլխավոր դատախազի 2023 թվականի հունիսի 12-ի «Երևան քաղաքի դատախազի պարտականությունների կատարումը Վ. Մկրտչյանի վրա դնելու մասին» N 254-Ա հրամանը:

Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ